

Համարը թիվ 61  
Տեսակը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀԵԹՀՏ 03.09.08./6(59) Հոդ.13  
Ընդունող մարմինը Համայնքի ավագանի  
Ստորագրող մարմինը Համայնքի ղեկավար  
Վավերացնող մարմինը  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 13.09.2008

Տեսակը Մայր  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 06.07.2008  
Ստորագրման ամսաթիվը 06.07.2008  
Վավերացման ամսաթիվը  
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԾԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԾԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ) ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔ

ԾԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հուլիսի 2008 թվականի թիվ 61  
քաղ. Երևան

ԾԵՆԳԱՎԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ (ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ) ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, Ծենգավիթ համայնքի ավագանին **որոշում է**

1. Ծենգավիթ համայնքի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքի (ոչ բնակելի տարածքի) 1 քառակուսի մետրի ամսական վարձավճարը սահմանել 1000 (հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դեպքերի:

2. Ծենգավիթ համայնքի սեփականությունը հանդիսացող լողավազանների, մարզադաշտերի, մարզադահլիճների և այլ դահլիճների՝ պարբերաբար սպորտային պարապմունքներ, մշակութային, համերգային, ուսումնական դասընթացներ կազմակերպելու և այլ նպատակներով վարձակալության տրամադրման դեպքում՝ մինչև 150 քմ մակերեսով տարածքների համար 1 քառակուսի մետրի վարձավճարը սահմանել ամսական 500 (հինգ հարյուր) դրամ, իսկ 150 քմ-ից ավելի մակերեսով տարածքների դեպքում՝ 200 (երկու հարյուր) դրամ:

3. Ծենգավիթ համայնքի սեփականությունը հանդիսացող ոչ բնակելի տարածքների (դահլիճներ, սրահներ և այլն) միանգամյա միջոցառում (հանդիպում, ժողով, սեմինար և այլն) կազմակերպելու նպատակով վարձակալության տրամադրման դեպքում 1 քառակուսի մետրի օրական վարձավճարը սահմանել 400 (չորս հարյուր) դրամ՝ անկախ փաստացի օգտագործման ժամաքանակից:

4. Հանձնարարել աշխատակազմի գույքի կառավարման բաժնին՝ նախկինում կնքված ոչ բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերի՝ վարձավճարի չափը սահմանող դրույթներում օրենքով սահմանված կարգով կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ուժը կորցրած ճանաչել Ծենգավիթ համայնքի ավագանու 09.04.2001 թ. թիվ 29 և 11.08.2005 թ. թիվ 120 որոշումները:

6. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի գույքի կառավարման, ֆինանսական և էկոնոմիկայի բաժինների վրա:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավար Ս. Հովհաննիսյանի և համայնքի ավագանու վրա:

Համայնքի ղեկավար՝

Ս. Հովհաննիսյան

Աշխատակազմի քարտուղար՝

Բ. Եղիազարյան